ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 0979-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԱԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջներով, հաշվի առնելով Զինիկ Նիկալի Գրիգորյանի (ծնված 10/02/1948թ) դիմումը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, կադաստրային գործում առկա տեխնիկական անձնագիրը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինությունները կառուցված չեն և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ՝ ***որոշում եմ***

1.Հաստատել Փամբակ համայնքի Բազում գյուղի 3-րդ փողոց, 22 բնակելի տուն հասցեում գտնվող 06-023-0043-0012 կադաստրային ծածկագրով 0,18354 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և հողամասի վրա առկա շինությունների չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Զինիկ Նիկալի Գրիգորյանի (ծնված 10/02/1948թ), Ռոստոմ Վազգենի Գրիգորյանի (ծնված՝ 01/01/1968թ), Կարինե Մարտինի Գրիգորյանի (ծնված՝ 02/12/1967թ), Արեն Ռոստոմի Գրիգորյանի (ծնված՝ 01/12/1989թ) և Արմեն Ռոստոմի Գրիգորյանի (ծնված 08/09/1991թ) բաժնային սեփականության իրավունքը 06-023-0043-0012 կադաստրային ծածկագրով 0,18354 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և հողամասի վրա գտնվող՝ մինչև 2001 թ-ը կառուցված 233,8 ք/մ ընդհանուր մակերեսով բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

23 սեպտեմբերի 2025, գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 0980-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջներով, հաշվի առնելով Կարեն Ռուդոլֆի Հարությունյանի (ծնված՝ 03/05/1974թ.) դիմումը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Ձորագյուղ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.04.1991 թ-ի թիվ 01 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության վկայագիրը, այն հանգամանքը, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, կառուցված շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին՝ ***որոշում եմ***

1.Հաստատել Փամբակ համայնք, գյուղ Ձորագյուղ, 7-րդ փողոց, 4 բնակելի տուն հասցեում գտնվող 06-066-0016-0010 կադաստրային ծածկագրով 0,10409 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և հողամասի վրա առկա շինությունների չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Կարեն Ռուդոլֆի Հարությունյանի (ծնված՝ 03/05/1974թ.) սեփականության իրավունքը 06-066-0016-0010 կադաստրային ծածկագրով 0,10409 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և հողամասի վրա գտնվող՝ մինչև 2001 թ-ը կառուցված 102,7 ք/մ ընդհանուր մակերեսով բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

23 սեպտեմբերի 2025
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 0981-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀօրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15 կետով, ՀՀ կառավարության 2011թ դեկտոմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները հաստատելու և ՀՀ կառավարության 2001թ հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918–Ն որոշմամբ սահմանված կարգի 17-րդ կետի պահանջներով, ՀՀ կառավարության 2005թ դեկտեմբերի 29-ի թիվ թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով 17.09.2025թ.-ին տրված N ՆԹ-8315-25 նախագծման թույլտվությունը, հաշվի առնելով Էդգար Աշոտի Ասատրյանի դիմումը, համայնքի ավագանու 15 Հոկտեմբեր 2025 թվականի N 123-Ա որոշումը. ***որոշում եմ***

1.Սեփականության իրավունքով Էդգար Աշոտի Ասատրյանին պատկանող՝ Փամբակ համայնքի Բազում բնակավայրում գտնվող 06-023-0250-0023 կադաստրային ծածկագրով 0,96758 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող հողատեսքը թռչնանոց կառուցելու նպատակով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2. 06-023-0250-0023 ծածկագրով հողամասին տրամադրել Լոռու մարզ, Փամբակ համայնք, գյուղ Փամբակ, Բազում, 4 հողամաս փոստային հասցե:

3.Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

24 սեպտեմբերի 2025
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 0982-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՐԴԱՆ ՌՈՒՇԻԿԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի ա. ենթակետով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 143-Ն որոշման հավելվածի տեղական տուրքեր բաժնի 9-րդ մասի 1-ին կետի դ. ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Վարդան Բեգլարյանի 2025 թվականի սեպտեմբերի 23-ի հայտը՝ ***որոշում եմ***

1. Անհատ ձեռնարկատեր Վարդան Բեգլարյանի /ՀՎՀՀ 66887408/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի գյուղ Դեբեդ, 10 փ, Շ.12 հասցեում (195 քմ մակերեսով հիմնական շինությունում) ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2025 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների (01.07.2025թ-31.12.2025թ) համար:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

24 սեպտեմբերի 2025
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 0983-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՐԴԱՆ ՌՈՒՇԻԿԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի ա. ենթակետով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 143-Ն որոշման հավելվածի 12-րդ մասի 1-ին կետի դ. ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Վարդան Բեգլարյանի 2025 թվականի սեպտեմբերի 23-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Վարդան Բեգլարյանի /ՀՎՀՀ 66887408/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի գյուղ Դեբեդ, 10 փ, Շ.12 հասցեում (195 քմ մակերեսով հիմնական շինությունում) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 3-րդ և 4-րդ եռամսյակների (01.07.2025թ-31.12.2025թ) համար:

2. Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

24 սեպտեմբերի 2025
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 0984-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թ N 698-Ն որոշմամբ սահմանված կարգով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-17 դրական եզրակացությունը, Փամբակ համայնքի գլխավոր հատակագիծը՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի 9 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը ՀՀ Լոռու մարզպետի 18 հոկտեմբերի 2024 թ. թիվ 845-Ա որոշումը, Փամբակ համայնքի ավագանու 28 օգոստոսի 2024 թվականի N 096-Ա որոշումը, հաշվի առնելով Հակոբ Ղազարի Սուլյանի (ծնված 22.04. 1991թ.) լիազորված անձ Զորիկ Ֆելիքսի Պապինյանի (ծնված 16.04.1991թ.) դիմումը, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, որոշում եմ.

1. Փամբակ համայնքի Դեբեդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ Հակոբ Ղազարի Սուլյանին (ծնված 22.04.1991թ.)սեփականության իրավունքով պատկանող 06-034-0102-0039 կադաստրային ծածկագրով 0,522561հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, հասարկական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:

2.Հողամասի նպատակային նշանակության փոփոխության պահին առկա կադաստրային արժեքի տարբերության համար հողամասի սեփականատեր Հակոբ Ղազարի Սուլյանին պարտավորեցնել համայնքի բյուջե (հողի օտարումից եկամուտներ հաշվեհամար՝ 900235422137) վճարել 651373ՀՀ դրամ (վեց հարյուր հիսունմեկ հազար երեք հարյուր յոթանասուներեք դրամ):

3. 06-034-0102-0039 կադաստրային ծածկագրով 0,522561 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարկական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Դեբեդ, 1-ին փողոց, 26/1 հողամաս փոստային հասցե:

4.Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

24 սեպտեմբերի 2025
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 0985-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՊԱՏ- ԼԵՌՆԱՋՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՆՈՐՈԳՈՒՄ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՕԲՅԵԿՏՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, ՀՀ կառավարության 2015թ-ի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման 7-րդ գլխի 147-րդ կետով՝ ***որոշում եմ***

ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Լեռնապատ- Լեռնաջուր բնակավայրերի ներհամայնքային ճանապարհի շինարարական աշխատանքների ավարտական ակտի ընդունման համար ստեղծել ավարտված օբյեկտն ընդունող հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Սուրեն Կոստանդյան - համայնքի ղեկավար:

Անդամներ՝

Արտակ Օհանյան - Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ:

Էդգար Ստեփանյան- գլխավոր կապալառու, «ԳՈՒՆԱՇԵՆ» ՍՊԸ–ի տնօրեն:

Սիրարփի Սարդարյան-հեղինակային հսկողություն իրականացնող «ՍԱՐԴԱՐՅԱՆՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն:

Անուշ Սահակյան- տեխնիկական հսկողություն իրականացնող «ԱԼԵՆՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

24 սեպտեմբերի 2025
գ. Փամբակ